ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ՀՀՊԾ-ԳՀԱՇՁԲ-25/27 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

07 հունվարի 2026թ.

2026թ.-ի հունվարի 7-ին, ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 23/1 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շենքում տեղի ունեցավ աշխատասենյակի վերանորգման աշխատանքների ձեռքբերման ՀՀՊԾ-ԳՀԱՇՁԲ-25/27 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Գ. Իգիթյան՝	ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,
Գ. Ղարիբյան՝	ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,
Է. Տոնիկյան՝	ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի փաստաթղթաշրջանառության և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ,
Ա. Գրիգորյան՝	ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի փորձագետ,
Վ. Մելքոնյան՝	ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի փաստաթղթաշրջանառության և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Իգիթյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար և «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր հինգ անդամները, հետևաբար /Կարգի/ 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ ընթացակարգի հրավերով սահմանված աշխատանքի կատարման դիմաց վճարումները նախատեսված էին իրականացվելու 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին, սակայն

հաղթող մասնակցին՝ «ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ-ին, պայմանագիրը ծանուցվել է 2025 թվականի դեկտեմբերի 24-ին, իսկ աշխատանքների կատարումը սահմանված է «պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում»: Ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու ժամկետները նախատեսված են ընթացակարգի հրավերի 10.1 կետով՝ որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները: Այդպիսով, աշխատանքների կատարումն ու համապատասխան վճարումները ենթակա էին իրականացման 2026 թվականին, մինչդեռ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության 2026 թվականի բյուջեով նշված գումարը չի նախատեսվել, ինչի արդյունքում աշխատանքը կատարելու դեպքում, դրա դիմաց վճարումներ չեն կարող իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց.

1. «ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ-ի հետ պայմանագիր չկնքել:
2. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Իգիթյան ____________________

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Ղարիբյան ____________________

Է. Տոնիկյան ____________________

Ա. Գրիգորյան ____________________

Վ. Մելքոնյան ____________________

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյան ____________________